# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700131, dilijan1@dilijan.am,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 574-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջան համայնքի բյուջեի միջոցների 2024 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի օգտագործման մասին:
Զեկ.Դավիթ Սարգսյան
2. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի կամավոր խնդիրների, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունների և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
3. Դիլիջան համայնքի ավագանու 2022թ. ապրիլի 05-ի թիվ 089-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
4. Դիլիջան համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 14-ի թիվ 550-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
5. «Դիլիջանի Հովհաննես Շարամբեյանի անվան մանկական գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաների ուսման վարձավճարների նկատմամբ զեղչեր սահմանելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
6. Դիլիջան համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 01-ի թիվ 513-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
7. Դիլիջան համայնքի ավագանու 2023թ. նոյեմբերի 02-ի թիվ 490-Ա որոշման մեջ

փոփոխություն կատարելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՂԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱԻԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700131, dilijan1@dilijan.am,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 575-Ն

### ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի «ա» կետի պահանջներով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջան համայնքի բյուջեի վարչական մասի 2024 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի 17,851,023.40 (տասնյոթ միլիոն ութ հարյուր հիսունմեկ հազար քսաներեք դրամ, քառասուն լումա) գումարն ուղղել նախորդ բյուջետային տարում բյուջեի վարչական մասի ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված առկա՝ էներգետիկ, կապի, կոմունալ, մասնագիտական և հարկային պարտավորությունների մարմանը, ապրանքանյութական արժեքների ձեռք բերմանը, իսկ ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդ՝ 112,786,377.80 (մեկ հարյուր տասներկու միլիոն յոթ հարյուր ութսունվեց հազար երեք հարյուր յոթանասունյոթ դրամ, ութսուն լումա) գումարից 2 000 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամը ուղղել Դիլիջան համայնք /Դիլիջանի քաղաքապետարան/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 5122 /վարչական սարքավորումներ/ հոդվածին, իսկ 110,786,377.80 (մեկ հարյուր տասը միլիոն յոթ հարյուր ութսունվեց հազար երեք հարյուր յոթանասունյոթ դրամ, ութսուն լումա) կապիտալ ծախսերի (սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում որպես համայնքի ներդրում) համաֆինանսավորմանը՝ Դիլիջան համայնք /Ճանապարհային տրանսպորտ/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՂԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱԻԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700131, dilijan1@dilijan.am,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 576-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումից բխող հետագա իրավական ակտերի ընդունումը վերապահել Դիլիջան համայնքի ղեկավարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱԶԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱԻԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Դիլիջան համայնքի ավագանու
2024 թվականի հունվարի 12 - ի
N 576 - Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով սահմանվում են Դիլիջան համայնքի (այսուհետ՝ համայնքի) կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը:

2. Համայնքի կամավոր խնդիրները ուղղակիորեն պայմանավորված չեն համայնքային կյանքի բնականոն ընթացքի հետ: Դրանք կարող են իրականացվել, միայն պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից բացի, հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

3. Յուրաքանչյուր տարի կամավոր խնդիրների իրականացման համար համայնքի բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցների չափը չի կարող գերազանցել այդ տարվա համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 5%-ը:

4. Այն դեպքում, երբ կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի ղեկավարի կողմից սեփական լիազորությունների իրականացման համար չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

5. Համայնքի կամավոր խնդիրներ են սահմանվում՝

1) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցությունը.

2) ծառայության ընթացքում զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների անապահով ընտանիքներին աջակցությունը.

3) նորածին երեխաների ընտանիքներին աջակցությունը.

4) համայնքի նորակոչիկներին հիգիենայի պարագաների /փաթեթների/ տրամադրում.

5) հանրակրթական դպրոցների սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վճարների փոխհատուցում.

6) հանրակրթական դպրոցների առաջին դասարանցիների գրենական պիտույքների /փաթեթների/ տրամադրում.

7) սույն կետում չնշված այլ խնդիրներ:

6. Աջակցություն են ցուցաբերում համայնքի մշակութային հաստատություններին, ինչպես նաև պետական, ազգային և այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումների մասնակցելու իրականացմանը:

7. Որպես համայնքի կամավոր այլ խնդիր ավագանու կողմից սահմանելու համար առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

8. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի սահմանումը նախաձեռնում է համայնքի ղեկավարը կամ համայնքի ավագանու անդամը, նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կամավոր խնդրի սահմանման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով դրա նպատակը, իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

9. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի սահմանելու առաջարկությունը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտները, ապա վերջիններիս կողմից լիազորված ներկայացուցիչը համայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր խնդրի սահմանման վերաբերյալ դիմում՝ նշելով դրա նպատակը և անհրաժեշտության հիմնավորումը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

10. Սույն կարգի 5-րդ կետում սահմանված կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի ղեկավարի սեփական լիազորություններն են՝

1) ստեղծում է համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին՝ ավագանու սահմանած չափորոշիչներին համապատասխան, սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով.

2) մշտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա, սույն կարգով սահմանված դրույթներին համապատասխան, որոշում է կայացնում սոցիալական աջակցություն տրամադրելու վերաբերյալ.

3) սահմանված կարգով ընթացք է տալիս սույն կարգի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված նախաձեռնություններին:

11. Սույն կարգի 5-րդ կետում սահմանված կամավոր խնդիրների լուծման նպատակով սոցիալական աջակցությունը տրամադրվում է մինչև 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

12. Բացառիկ դեպքերում՝ արտակարգ կամ չնախատեսված իրավիճակների առաջացմամբ պայմանավորված, հրատապ աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտության դեպքում, սոցիալական աշխատողի հատուկ եզրակացության հիման վրա՝ մշտական հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, կարող է տրամադրվել մինչև 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով աջակցություն:

13. Դրամական աջակցություն ցուցաբերելու դեպքում գումարը տրամադրվում է անկանխիկ՝ համապատասխան բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

14. Սոցիալական աջակցություն կարող է տրամադրվել նաև ոչ դրամական ձևով:

15. Մեկ բյուջետային տարվա ընթացքում միևնույն անձը (ընտանիքը) սոցիալական աջակցությունից կարող է օգտվել մեկ անգամ:

16. Անհրաժեշտության դեպքում աջակցություն տրամադրել Արցախից տեղահանված և Դիլիջան համայնքում բնակվող քաղաքացիներին:

17. Սոցիալական աջակցությունից չեն կարող օգտվել համայնքի ղեկավարը, ավագանու անդամը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցը, համայնքային ենթակայության կազմակերպության ղեկավար պաշտոններում աշխատողները, ինչպես նաև վերջիններիս հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձիք (ծնող, ամուսին, զավակ, թոռ, եղբայր, քույր), եթե նրանք վարում են համատեղ տնտեսություն, ինչպես նաև Դիլիջան համայնքի բնակիչ չհանդիսացող քաղաքացիները:

18. Սույն կարգի խախտմամբ տրամադրված սոցիալական օգնության գումարները ենթակա են վերադարձման համայնքի բյուջե:

19. Սույն կարգով սահմանված կամավոր խնդիրները սպառիչ չեն և համայնքի ավագանու կողմից կարող են սահմանվել կամավոր այլ խնդիրներ:

Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ս. Եգանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700131, dilijan1@dilijan.am, dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 577-Ա

### ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022թ. ԱՊՐԻԼԻ 05-Ի ԹԻՎ 089-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Ուժը կորցրած ճանաչել Դիլիջան համայնքի ավագանու 2022թ. ապրիլի 05-ի թիվ 089-Ա որոշումը:

2. Ստեղծել Դիլիջան համայնքի հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.

1) Բազինյան Արման - համայնքի ղեկավարի առաջին տեղակալ-հանձնաժողովի նախագահ,

2) Սարգսյան Արսեն - համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ-աճուրդավար,

3) Մկրտչյան Վարդան-համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ-արձանագրող,

4) Սանթրոսյան Լիպարիտ - համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ -հանձնաժողովի անդամ,

5) Գրիգորյան Վարդան - համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժ/պ-հանձնաժողովի անդամ,

6) Թամրազյան Վարդան - համայնքի ավագանու անդամ-հանձնաժողովի անդամ,
7) Ալիխանյան Ռոբերտ - համայնքի ավագանու անդամ-հանձնաժողովի անդամ:

8) Մելիքյան Սուրեն - համայնքի ավագանու անդամ-հանձնաժողովի անդամ:

9) Խեմչյան Արշակ - համայնքի ավագանու անդամ-հանձնաժողովի անդամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱԶԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱԻԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700131, dilijan1@dilijan.am,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 578-Ա

### ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 550-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի փոփոխումն Դիլիջան համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 14-ի «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 74/1 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 33.3քմ հողամաս ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին» թիվ 550-Ա որոշման և ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջան համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 14-ի «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 74/1 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 33.3քմ հողամաս ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին» թիվ 550-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն, մասնավորապես՝ «91288 դրամ» արժեքը փոխարինել «90743 դրամ» :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՂԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱԻԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700131, dilijan1@dilijan.am,
dilijan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 579-Ա

## «ԴԻԼԻՋԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԱՐԱՄԲԵՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԱՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶԵՂՉԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել «Դիլիջանի Հովհաննես Շարամբեյանի անվան մանկական գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաների 2024 թվականի ուսման վարձավճարների նկատմանբ զեղչեր սահմանելու մասին /Վարձավճարները սահմանվել են Դիլիջան համայնքի ավագանու 01.12.2023թ. թիվ 530-Ն որոշումով/:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. «Դիլիջանի Հովհաննես Շարամբեյանի անվան մանկական գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաների ուսման վարձավճարների նկատմամբ 2024 թվականի համար սահմանել զեղչեր՝

1) Միաժամանակ երկու բաժին հաճախող երեխաների համար երկրորդ մասնագիտության համար սահմանել զեղչ՝ ուսման վարձավճարի 30% -ի չափով,

2) Միակողմանի ծնողազուրկ երեխաների համար, ինչպես նաև միևնույն ընտանիքից 2 և ավելի երեխաներ հաճախելու դեպքում սահմանել զեղչ՝ ուսման վարձավճարի 50 %-ի չափով,

3) Երկկողմանի ծնողազուրկ, պատերազմական գործողությունների ընթացքում զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների և /կամ/ ազատամարտիկների երեխաներին ազատել ուսման վարձավճարից,

4) Արցախից բռնի տեղահանված ընտանիքների երեխաներին ազատել ուսման վարձավճարից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից հետո առաջացած իրավահարաբերությունների վրա:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱԶԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱԻԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700131, dilijan1@dilijan.am,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 580-Ա

### ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 01-Ի ԹԻՎ 513-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի փոփոխումն Դիլիջան համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 01-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան խոշորացված համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում 11-007-0104-0027 ծածկագրով 0.00746հա հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին>> թիվ 513-Ա որոշման և ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջան համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 01-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան խոշորացված համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում 11-007-0104-0027 ծածկագրով 0.00746հա հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին» թիվ 513-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն, մասնավորապես՝ որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

- «Հիմք ընդունելով <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդվածի 5-րդ մասը, սույն որոշման 1-ին կետով սահմանված, Դիլիջան համայնքի, Աղավնավանք գյուղի 11-007-0104-0027 ծածկագրով, 0.00746հա հողամասը, ըստ նպատակային նշանակության դիտարկել որպես էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հող, ըստ գործառնական նշանակության՝ կապի օբյեկտների:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱԶԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱԻԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700131, dilijan1@dilijan.am, dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 581-Ա

### ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 02-Ի ԹԻՎ 490-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի փոփոխումն Դիլիջան համայնքի ավագանու 2023թ. նոյեմբերի 02-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան խոշորացված համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում 11-044-0315-0075 ծածկագրով 0.005հա հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին» թիվ 490-Ա որոշման և ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջան համայնքի ավագանու 2023թ. նոյեմբերի 02-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան խոշորացված համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում 11-044-0315-0075 ծածկագրով 0.005հա հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին» թիվ 490-Ա որոշման որոշման մեջ կատարել փոփոխություն, մասնավորապես՝ որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

- «Հիմք ընդունելով <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդվածի 5-րդ մասը, սույն որոշման 1-ին կետով սահմանված, Դիլիջան համայնքի, Հովք գյուղի 11-044-0315-0075 ծածկագրով, 0.005հա հողամասը, ըստ նպատակային նշանակության դիտարկել որպես էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հող, ըստ գործառնական նշանակության՝ կապի օբյեկտների:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱԶԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱԻԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**